# ՊԱՏԵՐԱԶՄԸ

## ՀԱՐԱՒ-ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

---

Դժբախտ ամիս բուրերի և մանաւանդ Օրանժեան բուրերի համար, —ապրիլի ամիսը։ Ռոբէրտսը, ամէն պատրաստութիւն տեսնելուց յետոյ, արագ սլացաւ դէպի Կրոնստադ, որին տիրեց։ Բուրերը ետ ու ետ նահանջեցին պատերազմի բոլոր դաշտերում։ Անգլիացիք արդէն ոտք են դրել Տրանսվաալի հողի վրայ։ Բայց դառնանք դէպքերին։

Օրանժեան բուրերը, որոնք պաշարել էին Վէպէրէնը, ուր անգլիական գարնիզոն կար, սկսան ետ նահանջել դէպի հարաւ, իսկ միւս կողմից 6.000 բուրեր սկսան մօտենալ Բետուլիային։

Ապրիլի սկզբին Ս. Հեղինէի կղզին հասաւ Կրօնյէի հետ վերցրած գերիների առաջին խումբը, նոցա մէջ և գնդապետ Շիլը. նոցա համար բանակատեղ էր պատրաստուած։

Անգլէացիք նորից գրաւեցին Ռուկսվիլլը։

Վիլրուա Մոռէյլ, ֆրանսիական կամաւորների պետը, վախճանւեց։ Նա կարևոր ոյժ էր բուրերի պատերազմի մէջ։ Պարիզում, ապր. 4-ին հանդիսաւոր հոգեհանգիստ կատարւեց Տիրամայր եկեղեցում։

Գեն. լորդ Մեթուէնի պատուէրով պատրաստւեց գեղեցիկ յուշարձան Վիլբուա-Մորէյլի գերեզմանի վրայ, ֆրանսիական արձանագրութեամբ։

Նատալում, որի մի մասը դեռ բուրերի ձեռքումն է, բուրերի զօրաբաժինները ապրիլի սկիզբները ցրւած կանգնած էին Զունդա և Դէնդի գետերի միջև եղած բլուրների վրայ. Վաշրանկեան հովտի երկարութեամբ նոքա ամրութիւններ են կառուցել։ Նատալում բուրերի թիւը համարւում էր 15.000 հոգի։

Բուրական պետութիւնների պատւիրակութիւնը ապրիլի 7-ին ընդունւեց Հոլլանդիայի թագուհուց և մայր-թագուհուց։ Միսսիայի անդամներին ներկայացրին թագուհիներին Տրանսվաալի և Օրանժեան հանրապետութիւնների ներկայացուցիչներ Լէյդս և Միլլէր։

Զինկագօից ղրկած դաշտային հիւանդանոցի անդամները, Պրետորիա հասնելուն պէս՝ զինւեցին։

Անգլ. գեներալ Ռենդլի զօրաբաժինը ապր. 7-ին ընդհարում ունեցաւ Բուրերի հետ Դեւետսդորպից 5 անգլ. մղոն հեռու. Բուրերի դիրքը իշխում է քաղաքի վրայ։ Ռէնդլը գրաւեց մի դիրք, ուստից նա կարողացաւ բուրերին դուրս վանել և գրաւել այն լեռնադաշտը, որ առաջ Բուրերի ձեռքումն էր։

Բուր զօրքերի թւի մասին Թայմս'ին հետևեալ տեղեկութիւնն էր հեռագրում Լօռենցօ-Մարքեզէից, ապր. 3-ին, թէ երկու հանրապետութիւնների զօրքերի թիւը, Կապի ապստամբների հետ միասին, սկզբում հաւասար էր 105,000 հոգու, իսկ այդ օրերը՝ 80,000-ից աւելի, որոնցից 50.000 գտնւում էին Օրանժեան հանրապետութեան մէջ, 10.000-ը Բիգարեան լեռներում և 15.000-ը Ֆորտինիստրիմսի և Կլէրկսդորպի շրջաններում։

Դորա հակառակ, Տրանսվաալի կառավարութեան հրատարակած ցուցակներից երևաց, որ 1899 թ-ի դեկտեմբերին բուրերի զօրքը կազմւած էր 34, 000 մարդուց, բացի 5 հազար ապստամբներից. կորուստը մինչև ապրիլի սկիզբը բաղկացած էր 6,500 գերի ընկածներից, 8,000 սպանւած և վիրաւորւածներից. 14,000 հոգու համար հաշիւ չէ տրւած. ենթադրւում են, թէ դոքա վերադարձել են հայրենիք։

Պրետորիայում օտարերկրացի մասնագէտներին յաջողւեց ձուլարան շինել մեծ թնդանօթների համար։ (Նախկինը պայթել էր մեծ թւով զոհեր տանելով. Տրանսվաալի կառավարութիւնը խիստ քննութիւն էր սկսել այդ առիթով, և կասկածւում էր թէ անգլիացիք են պայթում առաջացրել)։

Գեն. Ռէնդլի զօրաբաժնից 25 մարդ, ապր. 10-ին մթնշաղին սայլերի հետ դէպի առաջաւոր դիրքերը գնալիս, անյայտ կորան. Ռոբերտսը այդ պատճառով ապր. 11-ին ղրկեց 11-րդ զօրաբաժինը Պօլ-Կերիւի հրամանատարութեամբ գեն. Ռէնդլ'ին օգնելու. նոքա հասան Կարիֆոնտէն առանց հանդիպելու նշանաւոր ընդդիմադրութեան, կորցնելով 2 սպանւած, 19 վիրաւոր և 11 անյայտ կորած։ Հեծեալ հետևակները գրաւեցին Լէուվկոպ։

Գեն. Չերմսայդ (անգլ). առանց դիմադրութեան գրաւեց Դեւէտսդորպը (ապր. 12)։ Գեներալներ Ֆրէնչ և Ռէնդլ առաջին զօրաբաժիններով գնացին հալածելու նահանջող բուրերին։

Բուրերը, 4-5,000 հոգի, հեռացան Վեպերէնի շրջակայքից դէպի Լեդիբրանդ (12 ապր.)

Սպիոնկոպի ճակատամարտին վերաբերեալ Ռոբէրտսի հեռագիրները Անգլիայի պատերազմական մինիստրը հրատարակութեան տւեց, համաձայնութեամբ Ռոբէրտսի. դոցանում Ռոբէրտսը կպչում է գեն. Բուլլէրին և մամաւանդ գեն. Ուօրրէնին։ Կառավարութիւնը, սակայն յայտնեց, որ

այդ հեռագիրների հրատարակութիւնը անհրաժեշտ չէ դարձնում Բուլլէրին յետ կանչելը։

Անգլիացիք ռմբակոծութեամբ դուրս քշեցին բուրերին իրենց բանակից Վարրենտոնի մօտ։

(Պրետորիայում, սաստիկ պայթում տեղի ունեցաւ Բէգբիի ձուլարանում, որը կառավարութեանը զէնքերի պահեստատեղի էր ծառայում. շինութիւնը բոլորովին կործանւեց. սպանւեցին 10, վիրաւորւեցին 32 մարդ, մեծ մասամբ Ֆրանսիացի և իրլանդացի բանւորներ)։

Գէնն. Համիլտոնը յետ մղեց Խարայէլպորտի մօտ գտնւող զօրեղ դիրքից։

(Լօրենցօ-Մարքեզ նաւահանգիստը հասաւ ֆրանսիական «Ժիրոնդ» շոգենաւը, որի պասաժիրների մէջ հարիւր բանւորներ կային Կրէզօի ֆրանսիական յայտնի թնդանօթային գործարանից։ Դոքա անշուշտ ուղևորւում էին Տրանսվաալ)։

Կապշտատում բոլոր հիւանդանոցները դատարկւեցին և այնտեղի բոլոր հիւանդներին տեղափոխեցին հիւանդանոցային նաւերը։

(Յովհաննէսբուրգի Ֆրանսիական մի բանկ ճանապարհ գցեց դէպի Պարիզ 135 հազար ֆունտ ստերլինգ ոսկեդրամ և 121 հազար ֆունտ ստերլինգի ոսկու զօդ (=ձուլածոյ)

Ռոբէրտսը, բռնւած նամակների և այլ փաստերի հիման վրայ, այս համոզման եկաւ, որ Օրանժեան բուրերը շատ դէպքերում հնազանդութիւն են յայտնել, որպէս զի ամեն ժամանակ հնարաւորութիւն ունենան թշնամական գործողութիւններ սկսելու անգլիացիների դէմ և արշաւանքներ սկսելու նոցա հաղորդակցութեան ճամբաների վրայ։ Այդ պատճառով Ռոբերտսը խիստ միջոցների դիմեց Օրանժեցիները զինաթափ անելու համար. և որովհետև այդ չէր յաջողւում լիովին, ուստի հրամայեց Օրանժեցիների ձիերը գրաւել, քանի որ ձիերը այնպէս հեշտ չէ ծածկելը։

Մարտի 29ին լրացաւ վեց ամիսը Մեֆկինգի պաշարման. բուրերը այդ օրը տօնեցին ռմբակոծութեամբ և նիւթական մեծ վնաս հասցրին քաղաքին։

Վարրենտոնի մօտ բուրերը նորից գրաւեցին իրենց կորցրած դիրքերը ապր. 14-ին։

Գէն. Ֆրէնչի հեծեալները հետախուզեցին Տաբանչուի արևելեան կողմը գտնւող բլուրները, և երևաց որ նոքա դեռ գրաււած են բուրերի բազմաթիւ զօրքերով. սայլախմբերի բացակայութիւնը դոցա մօտ ցոյց էր տալիս որ այդ զօրքերը բուրերի զօրքերի վերջապահներ են։

(Բուրական պատւիրակութիւնը Հաագից Ամստերդամ և Ռոտերդամ անցնելուց յետոյ ուղևորւեց Ամերիկայի Միացեալ նահանգները, չայցելելով Եւրոպայի այլ պետութիւնների մայրաքաղաքները, համոզւած լինելով որ ոչ ոք տրամադիր չէ միջամտելու բուր-անգլիական պատե-

քաղմին, Հիւս. Ամեր. Միաց. Նահանգների պետական քարտուղար արտաքին գործերի մինիստր Գէյ յայտնեց, որ նա կ' վերաբերուի բուրական միսսիային այնպէս, ինչպէս կարեւոր դիրք ունեցող որեւ է անձի, որը այցելում է Միացեալ Նահանգները, և նորան այնպէս կ'ընդունի, ինչպէս Մոնտէգիւ Ուայտ'ին. բայց նորան իրաւունք չի տալ որեւ է բանակցութիւն սկսելու արտաքին գործերի մինիստրութեան հետ։ Ամստերդամում պատուիրակութիւնը 17 ապրիլի ընդունեց տրանսվալեան յանձնաժողովի կողմից։ Ճանապարհին ժողովրդային ամբոխը սիրալիր ողջունեց եկողներին. նոցա մատուցեցին ծաղիկներ և պսակներ։ Բուրգոմիստրն ընդունեց պատգամաւորութիւնը. Երեկոյեան պատգամաւորութեան կազմած ընդունելութեան ներկայ էին ազգաբնակութեան բոլոր դասակարգերից անձեր, որոնց թւում բուրգոմիստրը, քաղաքացիական իշխանութիւնները և մի քանի կորպորացիաներ։ Պատգամաւորութեան անդամները ճառեր չարտասանեցին։ Յաջորդ օրւայ երեկոյեան կայացաւ մի համագումար ժողով, ուր պատգամաւորութեանը յայտնեց համակրութիւն. ժողովին ներկայ էին պատգամաւորութեան անդամները։—Ամերիկայում պաւիրակութեանը համակրութիւն ցոյց տալու համար մեծ պատրաստութիւններ են տեսնում։

Յոհաննէսբուրգի օգնական յանձնաժողովի քարտուղար Վինցենտ, որ Օրանժեան հանրապետութեան քաղաքացի է, այցելեց պետական քարտուղար Րէյցին և նորա հետ բանակցութիւններ սկսեց երկրի սահմաններից արտաքսած օտարերկրացիների մասին։ Րէյց յայտնեց, թէ ոչ միայն բրիտանական հպատակները, այլ և գերմանացիները, ամերիկացիները և ուրիշ օտարերկրացիները, որոնք հրաժարուեցին զէնք վերցնելու և գնալու պատերազմ, հետզհետէ կարտաքսուեն երկրից։

(Արդէն յայտնի է, որ անգլիական զօրքերը, հրամանատարութեամբ գեներալ Լէյտընանտ Կարրինգտոնի, Ռոդեզիա անցնելու համար, ղրկուեցին պորտուգալական Բէյրա նաւահանգիստը ու պորտուգալական հողի միջով անցան. Պորտուգալիայի կառավարութիւնը, իր չէզոքութիւնը այդպիսով խախտեց, հիմնուելով Անգլիայի հետ նախօրօք կռած դաշինքի վրայ։ Այդ առիթով Պորտուգալիայի Պատգամաւորների ժողովը համարեա միաձայն մերժեց Կոստի առաջարկը՝ հարցապնդումն անելու մինիստրութեանը այն պատճառով, որ նա թոյլ է տուել անգլիական զօրքին անցնելու պորտուգալական կալուածների միջով)։

Բլումֆոնտէնից ապրիլի 19-ին հաղորդեցին թէ նշանաւոր բովանդակութեամբ երկու նամակներ ընկան անգլիացիների ձեռքը. մէկի մէջ, որ նախագահ Շտէյն գրել է գեներալ Բոտային, տրտունջ է յայտնւում այն բանից, որ Կրոնստադի պահպանութեան համար թողնուած է սակաւաթիւ զօրք և հաղորդւում է, թէ բրիտանացիները 5,000 զօրք ունին առաջ

գնալու համար։ Այս Շտէյն ցաւ է յայտնում այն առիթով, որ բուրերի զօրաբաժինը, կրոնշտադը պաշտպանելու փոխարէն, զբաղուած է հացաւէտ շրջանները կողոպտելով և դրանով անբաւականութիւն է սերմանում Տրանսվաալի և Օրանժեան բուրերի մէջ. Շտէյն ցանկութիւն է յայտնում, որ Նատալում գտնուող 10,000 բուրերի մի մասը գնայ դէպի Վարենների կիրճը, որպէս զի հանրապետութիւնների ուժերը կենտրոնանան այնտեղ և կարողանան վճռական հարուած հասցնել անգլիացիներին։ Վերջում Շտէյն ասում է, թէ ինքը պատասխանատու չի լինի Օրանժեան բուրերի հաւատարմութեան համար, եթէ Տրանսվաալը երաշխաւորութիւն չըտայ, որ մտադիր է պաշտպանել Օրանժեան հանրապետութեան ժամանակաւոր մայրաքաղաքը։ Միւս նամակը Կրիւգէրի պատասխանն է, գրուած զօրապետ Ֆոնտրինգտրիմսին։ Կրիւգէր ասում է, թէ աւելի զօրք հաւաքել անհնար է, որովհետև ամեն մի մարդ, որ գտնւում է հանրապետութեան կարգադրութեան տակ, անհրաժեշտ է այնտեղի համար, ուր նա գտնւում է։ Վերջում ասած է, թէ Եւրոպայի միջամտութիւնը միայն ժամանակի հարց է)։

Տարանչուից գեներալ Դիկսոնի նահանջի ժամանակ՝ նրա սայլախումբը պաշարեղէնի հետ միասին ընկաւ թշնամու ձեռքը։ Վերջապահ զօրքը ենթարկւեց սաստիկ կրակի։ Նահանջը երկիւղալի դրութեան մէջ դրեց գեներալ Համիլտոնին. նա ժողովեց իր զօրքերը և յետ քաշւեց դէպի Տարանչու, թնդանօթաձգութեամբ և հրացանաձգութեամբ սաստիկ ընդդիմութիւն ցոյց տալով յարձակւողներին։

(Լոնդոնի Daily Express թերթը հաղորդեց մի խօսակցութեան բովանդակութիւն Շւէդիայի և Նորւեգիայի թագաւորի հետ, որ մօտաւորապէս ասել է հետևեալը. «Ես ձեր գործը արդար եմ համարում, բայց առանձնապէս հաւատ չեմ ընծայում կրօնական հիմունքներին, որոնք վերագրելի են միայն բուրերին։ Ես չեմ կարծում, թէ կարելի լինի խօսել Տրանսվաալեան կառավարութեան քաղաքական ազնւութեան մասին, որովհետև նա մի քանի անգամ մերժեց բարենորոգումներ մտցնելու հրաւէրը և անկասկած ձգտում էր արտաքսել բրիտանացիներին հարաւային Աֆրիկայից։ Ես ցաւում եմ Ջէմսոնի արշաւանքի վրայ, որպէս ցաւում են բոլոր ազնիւ անգլիացիները. բայց դուք, անգլիացիներդ, ապացուցել էք, որ համարեա ձեր բոլոր ախոյեաններից աւելի ընդունակ էք գաղութներ հաստատելու վայրենաբարոյ երկիրներում և իշխել նոցա վրայ, այն ինչ բուրերն այդ բանում բոլորովին անընդունակ դուրս եկան։ Մեծ-Բրիտանիան այժմ իմացաւ, որ նա ստիպւած է անսպասելի դժւար արգելքներին յաղթել, բայց հէնց ձեր անաջողութիւններից ձեզ համար այն օգուտը ստացւեց, որ ձեր գաղութները բաւականաչափ նշանաւոր օգնութիւն հասցրին ձեզ և դրանով աւելի ևս ամրապնդեցին իմ հաւատն այն

մասին, թէ ձեր գործը արդար է»։ Շւէդ-Նորւեգիայի արտաքին գործերի մինիստրը, այդ առիթով յայտնեց որ Թագաւորը խօսել է լոկ իբր և ոչ կառավարութեան անունից և որ շւէդացոց ու Նորւեգացոց մեծամասնութիւնը իւր համակրութիւններով բուրերի կողմն է)։

Բուրերը թողին Տաբանչու սարը և նահանջեցին, ըստ երեւոյթին, դէպի հիւսիս. Նոքա տեղում թողին մի թնդանօթ։

Հեծեալ հետևակների զօրաբաժինը հասաւ Վէտ գետի մօտ ապրիլի 20-ին. ապա նոյնտեղ առաջացան զօրքի այլ մասերը։ Երկաթուղու գիծը մինչև Բրադֆորտ վերականգնուեց։

Լորենցէ-Մարքեզ հասան 500 անգլիահպատակներ, մեծ մասամբ կանայք և երեխաներ, որոնք ստիպուած էին հեռանալ Տրանսվաալից։ Այդ հոսանքը ապա շարունակուեց աւելի մեծ չափերով։

Գանեցկի ռուս կապիտանը, որ կամաւոր էր մտել բուրերի մօտ, սպանուեց հետախուզութեան ժամանակ։

Անգլիացիք գրաւեցին Բրանդֆորտը առանց մեծ ընդդիմադրութիւն գտնելու, ապրիլի 20—21-ին։

Անգլիացիք (Բարտոնի բրիգադը, որի հետ էր նաև զօրաբաժնի գեներալ Գենտէր) անցան Վաալ գետը Վինձորտաունի մօտ։ Բուրերը դէպի հիւսիս նահանջեցին։

Գեներալ Համիլտոն, ապրիլի 18-ին, նշանաւոր յաղթութիւն տարաւ և համեմատաբար սակաւ կորուստով դուրս քշեց բուրերին Գաուտնեկի ուժեղ դիրքից։ Բուրերը ցրուեցին արևելեան և հիւսիսային ուղղութեամբ։ Անգլիացիները գերի վերցրին 25 մարդ, որոնց թւում մի հրամանատար և 16 վիրաւորուածներ։ Նօթնօրեաչ կուից յետոյ՝ բուրերը խոստովանում են, որ 12 սպանուած և 70 վիրաւորուած են ունեցել, որոնցից 20-ը պատկանում են օտարերկրացիների զօրաբաժնին։ Այդ զօրաբաժնի ռուս հրամանատար Մաքսիմով վիրաւորուած է։ Սպանուածների մէջ են գերմանացի ենթ-սպայ Գիւնտէր և երկու ֆրանսիացի։

Ռոբէրտսը մօտեցաւ Վէտին. բազմաթիւ բուրեր գտնւում էին գետի հակառակ ափում։ Անգլիացիք երեք ժամ ռմբակոծում էին թշնամուն, բայց և այնպէս չը կարողացան ճանապարհ բանալ իրենց համար միայն Դետոնի հեծեալ հետևակները կարողացան աջ կողմից անցնել գետը. Համիլտոնի դիւիզիան խանգարեց բուրերի երկու զօրաբաժնի միանալուն։ Հեծելազօրքը յարձակում գործեց բուրերի վրայ, որոնք փախչելով՝ պատերազմի դաշտում թողին սպանուածներին և վիրաւորուածներին։

Գեն. Բարտոնը ապր. 22-ին կուի մէջ էր (Վարրենտոնի մօտ). հետևակները ստիպուած էին մի քանի անգամ յարձակում գործելու բուրերի վրայ, որոնք սկսան հեռանալ միայն այն ժամանակ, երբ իրենց նահանջի ճանապարհը համարեա կտրուած էր։ Անգլիացիք կորցրին 5 սպանուած և 25 վիրաւոր. բուրերը թողին 13 սպանուած։

Ռոբէրտսի զօրքերը, Վէտս գետից Սմալդէլ գնալիս՝ ընդդիմութեան չհանդիպեցան։ (Նախընթաց օրը բուրերի ձախ թևի կողմում տեղի ունեցած կռւի մէջ սպանւեցին 40 հոգի)։ Բուրերը նահանջեցին դէպի Կրօնստադ. անգլիացիք վերցրին Մաքսիմի մի թնդանօթ և 25 գերի։ Անգլիացիք կորցրին 15 վիրաւոր, 1 սպանւած և երեք գերի ընկած։

Վեդրիւէրի մօտ Պօլ Կարիւլի զօրաբաժինը ընդհարւեց բուրերի հետ, որ գրաւել էին գետի ափը և դրել այնտեղ 6 թնդանօթ, որի պատճառով տեղի ունեցաւ սաստիկ թնդանօթային կռիւ։ Կռւին սկսելուց անմիջապէս յետոյ՝ բուրերը աւելի մեծ թւով թնդանօթներ հանեցին անգլիացոց աջ թևի դէմ։ Միևնոյն ժամանակ անգլիացոց կողմից երկու բատարէյներին աւելացան 4 ծովային և 2 պաշարման թնդանօթներ։ Անգլիացիները առաջ անցան և սկսեցին անցնել գետի ծանծաղուտով։ Բուրերը չամառ դիմադրութիւն էին ցոյց տալիս։ Անգլիական բոլոր զօրքերը անցան գետից և սկսեցին սպառնալ բուրերի աջ թևին։ Բուրերը փախան։ Գուտտոն վերցրեց Մաքսիմի մի թնդանօթ և 20 գերի։

Բուրերը դուրս մղւեցան Ֆորտինստրիմսից, և անգլիացիք բանակ դրին Վաալ գետի հիւսիսային ափի վրայ։

Գեն. Գէնտէր, Վարրենտօնի մօտ միացաւ գեն. Պէջէտի հետ։ Ռէնդըլի զօրաբաժինը գրաւեց Տաբանչուի մօտ բուրերի մի զօրեղ դիրք։

Մէֆկինգից տեղեկացրին որ պաշարւածները չափազանց նեղութեան մէջ են և դիմադրում են միմիայն, որովհետև այդ պահանջւում է։ Տիֆը տարածւում է քաղաքում։ Պաշարող բուրերի թիւը ապրիլի չուրջ 25-ին համարւում էր 3,000 հոգի։ Գնդապ. Պլումէրին յաջողւեց փոստային աղաւնիների միջոցով հաղորդակցութիւն սկսել Մէֆկինգի հետ։

Տաբանչու եկաւ գեն. Բրաբանտի զօրաբաժինը և միացաւ գեներալ Ռէնդլի զօրաժնի հետ։

(Յոհաննէսբուրգից Լորենցէ Մարքեզ հասաւ ոսկի 632 հազար ֆունտ ստերլինգ՝ Պարիզ ղրկելու, 26 հազար Ամստերդամ և 11 հազար Համբուրգ ղրկելու համար)։

(Տրանսվաալի ազգային ժողովը։ Պրետորիայում տեղի ունեցաւ ազգային ժողովի 1899 թ-ի նստաշրջանի պաշտօնական փակումը։ Ժուբէրի և դը-Կոկկի տեղերը զարդարւած էին դափնեայ պսակներով։ Հաւաքւել էր մեծ բազմութիւն. տիրում էր խորին լռութիւն։ Երբ եկաւ Կրիւգէր, կապելլանը աղօթք կարդաց, որի մէջ յիշեց Ժուբէրին։ Շատերն զգացւեցին այնպէս, որ լաց էին լինում։ Կէսօրից յետոյ բացւեց ազգային ժողովի նոր նստաշրջանը։ Կրիւգէր եկաւ պարլամէնտ պետական կառքով և հեծեալ հետևորդներով։ Ժողովում ներկայ էին հիւպատոսներն և օտար պետութիւնների զինւորական գործակալները, (որոնց թւում և ռուսաց գնդապետ Գուրկօն)։ Կրիւգէր ճառ արտասանեց, որի մէջ խորին երախտագի-

տութիւն յայտնեց հանգուցեալ Ժուբէրի յիշատակին, գովելով նորա քաջութիւնն ու բնաւորութիւնը. գովասանքով խօսեց նաև Օրանժեան հանրապետութեան փոկունութեան մասին Տրանսվաալի վերաբերմամբ յանձն առած պարտաւորութիւնների նկատմամբ։ «Օրանժեան հանրապետութիւնը, ասաց նա, լաւ օրինակ ցոյց տուեց ցեղակից հանրապետութեան»։ Տրանսվաալի յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ, բացառութեամբ Անգլիայի, լաւ են։ Իւր օրէնքներով և վերաբերմունքով դէպի Անգլիան՝ հանրապետութիւնը անցեալ տարի ապացուցեց խաղաղութիւն պահպանելու ցանկութիւնը։ Նախագահը հաղորդեց, թէ պատուիրակութիւն է ուղարկւած Եւրոպա և մատնանիշ արաւ օտար պետութիւնների զինւորական գործակալների ներկայութեան վրայ, որպէս մի ապացոյցի, որ վկայում է, թէ նոքա հետաքրքրւում են բուրերի պատերազմ վարելու եղանակով։ Նախագահը ուրախութիւն յայտնեց, որ ամբողջ աշխարհի համակրանքը բուրերի կողմն է։ Կրիւգեր յիշեց Տրանսվաալի բողոքի մասին՝ ուղղւած Եւրոպային, Անգլիայի վարմունքի դէմ, որով նա խախտում է Ժընևի կոնւենցիան։ Նախագահը հաւատացնում է, որ Տրանսվաալի ֆինանսները ընդունակ են դիմանալու պատերազմի ծանրութիւններին։ Հանքերի դրութիւնը նա անւանեց փառաւոր և մատնացոյց արաւ այն հանգամանքի վրայ, որ այդ բանում Տրանսվաալն օգնեց Օրանժեան հանրապետութեան։ Նախագահը Աստծու օրհնութիւնը հրաւիրեց բուրերի վրայ և դրանով վերջացրեց իւր ճառը)։

Մէֆկինգում՝ քաղաքը և բերդապահ զօրքերը վճռեցին մինչև վերջին շունչը դիմադրել։ Սկսւում է ձիու մսից պատրաստւած երշիկի գործածութիւնը

(Մի ժողովում, Վաշինգտոն, Հիւս. Ամեր. որին մասնակցում էին երկու պալատների և կոնգրէսի շատ անդամներ և այլ նշանաւոր անձեր, որոշեց բուրերի պատուիրակութեան ցոյց տալ այն ընդունելութիւնը, որպէս ժամանակով ցոյց է տրւած եղել Լաֆայէտին և Պարնէլլին — Նեու-Եօրկ, 15 օլդերմէններից և 15 համայնական խորհրդատուներից բաղկացած յանձնաժողովը վճռեց հանդիսաւոր կերպով դիմաւորել բուր պատուիրակներին։ Որոշման մէջ ասւած է, թէ քաղաքային վարչութիւնը «կողջունէ» պատուիրակներին և կը հաւատացնէ նոցա, թէ Նեու-Եօրկի ազգաբնակութիւնը համակրանքով է վերաբերւում նոցա փառաւոր պատերազմին»։ Որոշումը ընդունեց բոլոր ձայների առաւելութեամբ ընդդէմ միայն մէկի, որ բողոքեց որոշման դէմ)։

Գեն. Ֆրէնչ միացաւ Ռոբէրտսի զօրքին, ապր. 25։

Բուրերը հեռացան Լէդիբրանդից և Ֆիքսբուրգից. պաշտօնեաները իրենց հետ տարան գրքերն ու պաշտօնական թղթերը. և այն ամենը, ինչ կարող էր պատերազմին և Մաուզէրի հրացանների ձեռք բերելուն վերաբերել, ոչնչացրեց։

(Լոնդոն, Պրիմրոզի լիգայի տարեկան ժողովում Սալսբըրի ճառ-
արտասանեց, որի մեջ ասաց, թէ եւրոպական կառավարութիւնները, որ-
քան հայտնի է, Անգլիային խաղաղասէր կերպով են վերաբերւում։
Կատարեալ երախտագիտութեան է արժանի բոլոր կառավարութիւնների
այն հանգիստ չէզոքութիւնը, որ նոքա պահպանում են անգլօ-բուր պա-
տերազմի ժամանակ, ղեկավարւելով արդարութեան և խաղաղութեան գա-
ղափարներով. բայց դրանից այն եզրակացութիւնը չըպէտք է հանել, թէ
Անգլիան չըպէտք է զգուշութեան միջոցներ ձեռք առնի։ Անգլիան կարող
է յոյս դնել միմիայն իւր սեփական ուժերի վրայ։ Սալսբըրին աւելացրեց,
որ այդ խօսքերին առիթ չէ տուել մի որ և է այնպիսի բան, որ արտա-
քին գործերի մինիստրին երկիւղների տեղիք տար, բայց չըպէտք է մո-
ռանալ, որ ՚շատ երկիրներում ազգաբնակութեան մի որոշ մասը, որը,
պէտք է յուսալ, շատ նշանաւոր չէ, յամենայն դէպս շատ աղմկալի է,
ամէն ինչ անում է՝ միայն թէ կարողանայ անւանարկել Անգլիան։ Այդ-
տեղ-տեղ երևացող, կատարելապէս անբացատրելի, զայրոյթը Անգլիայի
դէմ կարող է, սակայն, աւելի խորը տրամադրութեան նշան համարել,
որի հետ Անգլիան, շատ կարելի է, ստիպւած ՚կը լինի իւր հաշիւները
տեսնել։ Անգլիացիները չեն ընդունի ընդհանուր զինուորագրութիւնը.
պէտք է գտնել միջոցներ և ճանապարհներ, որոնք կօգնէին սովորելու
զէնքի գործածութիւնը սեփական պաշտպանութեան համար։ Երկրի ինք-
նապաշտպանութիւնը պէտք է ամբողջ ժողովրդի գործը լինի, և ոչ թէ
միայն կառավարութեան. պէտք է այնպէս անել, որպէս զի ընդհանուր
ձգտումը, ընդհանուր ցանկութիւնը զինաւորւած ազգ դարձնէր անգլիա-
կան ժողովուրդը)։

Ռոբէրտսը շատ գոհունակ հեռագիր տւեց ապրիլի վերջը։ Նա հա-
լածում էր բուրերին մի տեղից միւս տեղ. անգլիացիք գտնում էին ար-
դէն Զանդ գետից ութ մղոն դէպի հիւսիս. հեծելազօրքը և հեծեալ հետե-
ւակները Վէնտէրբուրգ էին. Տէկկէրի զօրաբաժինը Դեւֆոնտէնի մօտ էր։
Համիլտոնի զօրքերը Բրոդւուդի հեծեալների հետ գնացին Կրէյցեեպէն.
Վէնտէրբուրգի մօտ Համիլտոնի զօրքերը զօրեղ դիմադրութեան հանդի-
պեցան. Սմիտդորփէնսի բրիգադը օգնում էր Համիլտոնին։ Կորուստը չըն-
չին է եղած։

Բուրերը Զանդ գետի մօտ դիրք էին գրաւել գետի հիւս. կողմում,
Համիլտոնի և Գուտտոնի զօրքերի մէջտեղ։ Բուրերը նահանջեցին, տալով
20 գերի։

Տաբանչուից բուրերը հեռացան և արևելակողմում դիրքեր բռնեցին
20 մղոն երկարութեամբ։

Անգլիական զօրքերը հասնում են Ժընեւ-Սայտինգ, Կրոնստադից 14
մղոն հեռու, լաւ դրութեան մէջ։ Ֆրէնչը իւր հեծելազօրքի հետ գնում է

ռուջնից՝ Կրոնստադի վրայ։ Վերջին երկու օրւայ մէջ անգլիացիք 100 գերի վերցրին։ Ապա Ռոբէրտսը հասաւ Բոշդան, ութ մղոն Կրոնստադից հեռու. բուրերը գլխերը հեռացան ամրութիւնների առաջին գծից. գեն. Ֆրէնչ գրաւեց Վարշ գետի ծանծաղուտը նախքան բուրերը կը կարողանային ամրանալ այնտեղ։

Կրոնստատի առումը։ Ապրիլի վերջը Ռոբէրտս մտաւ Կրոնստադ, նախօրօք ընդունելով մի ֆելդկարնէտից քաղաքը յանձնելու յայտարարութիւնը։ Կրոնստադը, Բլումֆոնտէն մայրաքաղաքը անգլիացիներից բռնելուց յետոյ, Օրանժեան հանրապետութեան ժամանակաւոր մայրաքաղաքն էր յայտարարւել։ Անգլիացիք դրօշակ բարձրացրին։ Նախագահ Շտէյն նախընթաց օրը երեկոյեան Կրոնստադից տեղափոխեց Լինդլէյ, որը յայտարարւեց հանրապետութեան կենտրոնատեղի։ Բուրերը նահանջեցին դէպի Վաալ, ուր ամրացան։

Պէտք է ասած, որ Կրոնստադի առումը, առանց դիմադրութեան հանդիպելու և այդքան արագութեամբ, անսպասելի էր. Կրոնստադը լաւ ամրացրած էր կարծւում։ Պէտք է ընդունել, որ Ռոբէրտսի ուժերը անհաբեկող են և բուրերը չեն կամեցել շրջապատւած լինելու վտանգին ենթարկւել։ Սակայն, բուրական տակտիկան աւելի լաւ հասկացած լինելու համար կարծում ենք որ հարկ կայ նկատի առնել այս, որ Բլումֆոնտէնին Ռոբէրտսը տիրեց փետրւարի 28-ին. այսպիսով ուրեմն այդ դէպքից մինչև Կրոնստադը վերցնելը տևեց ամբողջ երկու ամիս։ Եւ այդ է բուրերի ուզածը,—պատերազմի տևողութիւնը կարելին չափ երկարցնել։

Պատերազմի արևելեան դաշտում, Նատալում, անգլիացիք նոյնպէս աւելի առաջ գնացին։ Բուլլէրը վերցրեց Դէնդի՛ն և ապա Նիւ-Քէսըլ։

Մեֆկինգի ազատումը։ Մայիսի 6-ին Անգլիական օգնական զօրքը, 2.300 հոգի, հրամանատարութեամբ Մեհոն'ի, ճամբայ հարթեց և մտաւ Մեֆկինգ քաղաքը, որի գարնիզոնը պաշարւած էր բուրերից պատերազմի սկզբներից։ Բուրերը նախ փորձեցին քաղաքը շտուրմով առնել, բայց մի ջոկատ, մտնելով քաֆրների թաղը, հանդիպեց գարնիզոնի ընդդիմութեան և 90 հոգով գերի ընկան անգլիացիների ձեռքը։ Դորանից յետոյ շուտով օգնութեան հասաւ անգլիական օգնական զօրքը և ազատեց քաղաքը։ Մեֆկինգը հերոսաբար պաշտպանող գնդապետ Բադէն-Պաուէլը ստացաւ գեներալ-մայորի աստիճանը։

---

Մայիս ամսին, որպէս պիտի սպասել, վճռական գործողութիւններ են կատարւելու արդէն Տրանսվաալի հողի վրայ։ Ամբողջ աշխարհը լարւած սպասում է Տրանսվաալում կատարւելիք մեծ դրամային, չնայած իրար դէմ կանգնած ուժերի անհաւասարութեան։

(Բերմինգամում Անգլիայի գաղթավայրերի մինիստր Չեմբերլէնը արտասանեց մի ճառ, որի մէջ խիստ կերպով խօսեց այն «կեղծաւոր կուսակցութեան մասին, որ պաշտպանում է պատերազմը, որպէս զի դուր գայ ընտրողներին. բայց չարձակւելով գաղթականութեան մինիստրութեան վրայ, նոքա շօշում են իրենց հակումները։ Չեմբերլէն մեղադրում է Բաններմանին, որ նա հակառակում էր կառավարութեան ջանքերին պահպանելու խաղաղութիւնը։ Անգլիան աւելի ուժեղ դուրս կը գայ պատերազմից, քան եղել էր։ Ճառախօսը ցոյց ունի, որ ժողովուրդը բաւականաչափ խոհեմութիւն և քաջութիւն կունենայ, որ ուղղէ իր սխալները։ Չեմբերլէն նախազգուշացնում է ունկնդիրներին յայտնի քաղաքագէտների առաջիկայ փորձերի դէմ՝ խլելու Անգլիայի ձեռքից յաղթութեան պտուղները։ Ինչ վերաբերում է գլխաւոր պայմանին վերջացնելու պատերազմը հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների հետ՝ Չեմբերլէն ձևակերպեց նրան հետևեալ կերպով. կառավարութիւնը մտադրութիւն չունի նորից ճանաչելու հանրապետութիւնների անկախութիւնը և նոցա երկիրները պէտք է միացւեն Թագուհու այն տիրապետութիւններին, որոնք գտնւում են անգլիական դրօշակի տակ. Անձնական ազատութիւնը կը պահպանւի։ Պատերազմից յետոյ առժամանակ հանրապետութիւնները կը կառավարւեն զինուորական վարչութեամբ, բայց կառավարութիւնը մտադրում է մտցնել երկու հանրապետութիւններն էլ գաղթականութիւնների շարքի մէջ սեփական կառավարութիւններով, հէնց որ հնարաւոր կը լինի անել այդ առանց որ և երկիւղի)։

Z.